ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2025թ. ՆՄՈ/897-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՆՄՈ/874-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի հոկտեմբերի 17-ի թիվ 95/11/277 գրությունը՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությունում ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման մասին» N ՄՈ/874-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «հոկտեմբերի 23-ին» բառերը փոխարինել «նոյեմբերի 4-ին» բառերով՝

2) որոշմամբ հաստատված «Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման պլան»-ում «հոկտեմբերի 23-ին» բառերը փոխարինել

«նոյեմբերի 4-ին» բառերով, իսկ «23.10.2025թ.» թվերը փոխարինել «04.11.2025թ.» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**